



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. ՔՈՎԻԴ-19-Ի ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Համայնքային մակարդակով հետազոտություն Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում

Ամփոփագիր

- ՀՌԿԿ-Հայաստանը հետազոտություն է անցկացրել Լոռի, Շիրակ և Տավուշ հյուսիսային երեք մարզերում բազմաչափ աղբատույությունը և Քովիդ-19-ի նկատմամբ խոցելիությունը համայնքային մակարդակում՝ չափելու նպատակով:
- Ընտրանք. 2021 թվականի օգոստոսին իրականացված հարցմանը մասնակցել է շուրջ 2400 մարդ:
- Հարցման տվյալները օգտագործվել են Քովիդ-19-ի խոցելիության ինդեքսը (ՔԻԻ) ստանալու համար, որը մեծամասամբ հիմնված է բազմաչափ աղբատույության հետազոտության Ալբայր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդի և Հարավաֆրիկյան Հանրապետության վիճակագրական ծառայության կողմից ստեղծված ԿԻԻ վրա:
- Հարցման հարցաշարը հիմնված է Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) հարցաշարի վրա:
- Հետազոտության տվյալները բաշխվել են ըստ ութ կոնկրետ համայնքների՝ համայնքային մակարդակի ԿԻԻ ստանալու համար, որը մանրամասն ներկայացնում է այս երեք մարզերի կոնկրետ համայնքների վրա ազդեցություն ունեցող խոցելիության գործոնները:
- Լոռու, Շիրակի և Տավուշի երեք մարզերը տրոհվել են ութ համայնքների՝ 1) Իջևան, 2) Տավուշի գյուղական համայնքներ, 3) Տավուշի քաղաքային համայնքներ (բացառությամբ Իջևանի), 4) Շիրակի գյուղական համայնքներ, 5) Գյումրի, 6) Լոռու գյուղական համայնքներ, 7) Սպիտակ և 8) Վանաձոր:

Խոցելիության բազմաչափ գնահատում

- ԿԻԻ ստեղծման միջոցով համայնքային մակարդակով Քովիդ-19-ի նկատմամբ խոցելիության չափումը բազմաթիվ չափականություններում հնարավորություն է տալիս բացահայտել կոնկրետ համայնքներին ներհատուկ խնդիրներ, որոնք կարող են նպաստել համաճարակի շրջանակում առողջության և տնտեսական խոցելիության ավելացմանը:
- Ըստ Հարավաֆրիկյան Հանրապետության վիճակագրական ծառայության կողմից տրված սահմանման, խոցելիությունը վերաբերում է ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական տարրերին, որոնք ազդում են անհատների և համայնքների դիմադրողականության վրա և վերհանում նրանք, որոնց վրա COVID-19-ի բացասական ազդեցությունն առավել հավանական է:
- Հարավաֆրիկյան Հանրապետության վիճակագրական ծառայության կողմից ստեղծված CVI-ը, որն ընկած է Լոռիում, Շիրակում և Տավուշում համայնքային մակարդակում CVI-ի ստացման հիմքում, ներառել է արդեն գոյություն ունեցող տվյալները՝ իրենց ինդեքսը զարգացնելու համար՝ օգտագործելով ԱՖ ինդեքսների գնահատման մեթոդը, այն է՝ բազմաչափ կելով [աղբատույության] մարդաքանակը խոցելիության ինտենսիվությամբ:
- Համազգային համայնքային մակարդակի ԿԻԻ մշակումը կօժանդակի առավել խոցելի համայնքներին առաջնահերթություն տալու գործողություններում՝ Քովիդ-19-ի հետ կապված թիրախային ծրագրեր և իրագրելու իրականացնելու համար:

ՔԻԻ-ի հաշվարկում ներառվել է չորս չափականություն: Յուրաքանչյուր չափականություն ունի ցուցանիշների և հարակից հարցերի իր հավաքածուն յուրաքանչյուր ցուցանիշի համար՝ Հայաստանում աղբատույության համատեքստի հիման վրա:

Աշխատանք (1/4)

Ցուցանիշներ. 1) Աշխատաշուկայում մասնակցություն. 2) Երկարաժամկետ գործազրկություն. (3) Արժանապատիվ աշխատանք

Կենցաղային ծառայություններ (1/4)

Ցուցանիշներ. (1) Ինտերնետի հասանելիություն. (2) Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի շարունակական հասանելիություն. (3) Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն. (4) Առողջ ջեռուցում

ՏՏ կազմ (1/4)


Ցուցանիշներ. (1) Գերբնակեցում. (2) Բազմասերունդ ՏՏ-ներ

Առողջություն (1/4)


Ցուցանիշներ՝ (1) Տարիք. (2) Առողջապահական ծառայությունների հասանելիություն. (3) Առողջապահական ծառայությունների մատչելիություն

Մարզային և համայնքային մակարդակի ՔԻԻ

Մարզի մակարդակով խոցելի անձանց մասնաբաժինը



Համայնքի մակարդակով խոցելի անձանց մասնաբաժինը



This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of CRRC-Armenia and do not necessarily reflect the views of the European Union.

Այս հրատարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:




ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. ՔՈՎԻԴ-19-Ի ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Համայնքային մակարդակով հետազոտություն Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում

ՔՄԻ չափողականություններն ըստ ցուցանիշների

Խոցելի տնային տնտեսությունների բաշխումը բոլոր երեք մարզերով



Եզրակացություններ և առաջարկներ

Եզրակացություններ

- Քովիդ-19-ի մասով խոցելի բնակչության տեսակարար կշիռը Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում միասին կազմել է 19.7%: Շիրակում (18.8%) այս ցուցանիշն ավելի ցածր է քան Լոռիում (20.1%) և Տավուշում (20.4%):
- Քովիդ-19-ի մասով խոցելի բնակչության տեսակարար կշռի զգալիորեն ավելի բարձր ցուցանիշ գրանցվել է Շիրակի (30.5%), Տավուշի (26.8%) և Լոռու (29.8%) գյուղական համայնքներում:
- Աշխատանքային տարիքի (15-75) անհատների կեսից ավելին (55.9%) ընդգրկված չեն աշխատուժի մեջ, իսկ 39.6%-ը՝ երկարաժամկետ գործազուրկ են:
- Կենտրոնացված ջրամատակարարման մշտական հասանելիությունը առավել խնդրահարույց է Լոռու (28.6% ամբողջ մարզում, 30.6% Լոռու գյուղական համայնքներում) և Տավուշի մարզերում (27.7% ամբողջ մարզում, 40.9% Տավուշի գյուղական համայնքներում) քան Շիրակում (10%): Լոռու քաղաքային համայնքներից Սպիտակի (29.1%) և Վանաձորի (26.8%) ՍՏ-ներն արձանագրել են խնդիրներ կենտրոնացված ջրամատակարարման մշտական հասանելիության մասով: Շիրակում աղբահանությունը նշվել է որպես կարևոր խնդիր (35.5% Շիրակի գյուղական համայնքներում): Շիրակի գյուղական համայնքներում ՍՏ-ները գրկանքի առավել բարձր մակարդակ (37.6%) նշել են հանրային ծառայությունների մասով (ջրամատակարարում, սանիտարական պայմաններ, աղբահանություն, էլեկտրաէներգիայի մատակարարում և այլն): Առողջ ջեռուցումը խնդիր է բոլոր երեք մարզերում:
- Չնայած գերբնակեցումը կենսական խնդիր չէ Լոռու, Շիրակի և Տավուշի ՍՏ-ների համար, բոլոր երեք մարզերի 60%-ից ավել ՍՏ-ներում առկա է վաթսուներից բարձր տարիք ունեցող ընտանիքի անդամ:

Առաջարկներ

- Բազմաչափ աղբատության շրջանակներում Քովիդ-19-ի խոցելիության կրճատմանն ուղղված ցանկացած քաղաքականություն պետք է հաշվի առնի հետևյալը.
 - ⇒ Առողջությունից բացի մյուս երեք չափականությունները (աշխատանք, կենցաղային ծառայություններ, ՍՏ կազմ) ևս կարևոր են հասկանալու համար Քովիդ-19-ի խոցելիությունը և դրա հաղթահարման ուղղված քայլերը:
 - ⇒ Աշխատանքի մասով խոցելիությունը վերաբերում է (1) աշխատանքային մասնակցությանը (2) երկարաժամկետ գործազրկությանը (3) արժանապատիվ աշխատանքի առկայությանը:
 - ⇒ Կենցաղային ծառայությունների հասանելիությունը վերաբերում է (1) ինտերնետի հասանելիությանը, (2) կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելիությանը, (3) կենտրոնացված ջրահեռացմանը և աղբահանությանը, ինչպես նաև (4) առողջ ջեռուցմանը:
 - ⇒ Տնային տնտեսությունների կազմը վերաբերում է (1) գերբնակեցմանը և (2) բազմաբնակչության տնային տնտեսություններին:
 - ⇒ Ընդհանուր առմամբ առողջապահական ծառայությունների հասանելիությունը և տարիքը Քովիդ-19-ի խոցելիությանը նպաստող կարևոր գործոններ են:



This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of CRRC-Armenia and do not necessarily reflect the views of the European Union.

Այս հրատարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՀԿԿ-Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: